77. Թղթի մէջ կրած. «Չինըմաչինա Թագաւոր Դէօհար խանըմից. Նամ պարև Սանասարին, Բաղտասարին, Սանասարին»:

Բաղտասարն ասաց.—Էս ի՞նչ պան ա. էրկու տիր պարև կիրէ Սանասարին, մէկ տիր ձի: Լա՜ւ. Սանասար ճոճ ախպէրն ա. յառաջ ինորն ա կիրէ. էն լաւ ա. ինչո՞ւ ա էրկու տիր կրէ ինոր:

78. Սանասար տուից էկաւ, պարև տուեց. Բաղտասար չառուեց, ասաց.—Ախպէր, ընչի՞ էս նեղացե:

Ասաց.—Ապա, ինչի՞ Չինըմաչինայ Թագաւոր, Դէօհար խանըմ, էրկու տիր պարև կիրէ քե, մէկ տիր՝ ձի:

79. Ասաց.—Ախպէր, ըմ ինչ անեմ, էն ա կրէ:

—Չէ, ասաց. ես, տու տը կռուենք:

—Ընչի՞ կռուենք, մէ տարտակ պարևի խամա՞ր:

Ասաց.—Խա՛, կռուենք:

80. Ասաց.—Ախպէր՝ ես չըմ զանի քե, տու զանի ձիկ բոպանի:

Ինչքան ասաց, հնարք չէլաւ ախպօր խետ. ասաց.—Էրթանք էն չիման տեղ, մէ քիչ խաղամ խետ, ինոր սիրտ իջնի, կը կեանք տուն:

81. Գուրզ առին, կեացին. Սանասար կայնեց նշանտաշի կլէօխ. Բաղտասար գուրզ առեց, էզար. սրտից էզար Սանասարին, որ բոպանի. գուրզը կընաց կլխու վերէն. Սանասար պռնեց գուրզ, յետի էթալ չը խասուց ախպօր մօտ. ախպէր առեց՝ մէ՛կ էլ էզար:

82. Սանասար էլ մ՝ էլ պռնեց, մէկ էլ էթալ, վոծի կեաղ չիմացաւ, գիւրզը էթալ, տիպաւ ախպօր մէկ ոտաց. խելք կընաց, ընկեաւ էտա տեղ:

83. Սանասար շլկեց ախպօր, պերեց էթալ տուն, նստաւ չուր լոս էլաց:

Լոս պացուաւ, ախպօրը ուշկ էկաւ վերէն, վերկացաւ նստեց:

Սանասար ասաց.—Ախպէր, էտ ի՞նչ էլաւ՝ տու էտա ցեղ էլար:

Ասաց.—Ոտս ցաւաց, իմ խելք կնաց:

84. Սանասար ասաց.—Ախպէր, տու կաց ըստայ, ես կէրթամ էտ շան մօտ: Կաց պարէօվ արաց, կընաց: Կընաց, շատ քիչ Աստուած կիտի, մէկ էլ Չինըմաչինայ Թագաւորի խող տիւս էկաւ, տեսաւ մէկ խօվլի:

85. Մի ասի, էտա խօվլիւ էտ Թագաւորի խօվլին ա. էտ խօվլին էլ փալէվաններից մէկն ա:

Էտ խօվլիւ կանչեց, Սանասարին ասաց.—Դո՞ր կերթաս: